ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման դասախոսական և ուսանողական հարցման արդյունքների վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

20.06.2015թ.

Գնահատման գործող համակարգի, նաև ուսանողների թեստային միջանկյալ գնահատման առավելություններն ու թերությունները վեր հանելու, շտկելու, զարգացնելու, նաև ըստ կրթական վերջնարդյունքների գնահատման հնարավորությունների բացահայտման, գնահատաման արդյունավետության բարձրացման ուղիներ գտնելու համար մասնաճյուղում Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ, նախկինում՝ ԿՈԱԳ) բաժնի որոշմամբ **/21.02.2013թ. արձ. թիվ 2 և 23.05.15թ. արձ. թիվ 5**/ ՈՒՄՎ-ի հետ միասին 2012-13 և 2014-15 ուստարիների I կիսամյակի քննաշրջանից հետո կատարվել է ուսումնասիրություն դասախոսների և ուսանողների շրջանում՝ հարցման միջոցով, առանձին հարցաշարերով: 2-րդ հարցումն իրականացվել է վերանայված, նույնիսկ կարելի է ասել ամբողջությամբ վերակառուցված հարցաշարերով: Նոր կազմված հարցաշարերը, ի տարբերություն նախորդի, պարունակում են նաև ուսանողների գնահատման չափանիշներին վերաբերող հարցեր, և խմբավորված են 4 բաժիններում. ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները, ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերն ու նրանց արդյունավետությունը, ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը, ուսանողների գնահատման առաջարկվող ձևերի ընտրում:

Այդ հարցումների նպատակներից մեկն էր պարզել, արդյոք գործող համակարգը թույլ է տալիս նախ լիարժեք բացահայտել ուսանողի գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որքանով է այն հնարավորություն տալիս գնահատել ուսանողի ձեքբերումները, և որքանով է այն օբյեկտիվ, թափանցիկ, և ինչը չի բացահայտվում գնահատման այս համակարգում, նաև տեղեկատվության հավաքագրման և մշակման միջոցով հետագայում բարելավել ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացի իրակացման ձևերի, չափանիշների, մեթոդների, գնահատման օբյեկտիվության և ուսանողի ցուցաբերած արդյունքների լիարժեք արտացոլման հնարավորությունը:

Հարցմանը մասնակցել են բոլոր մասնագիտություններից 31 դասախոսներ և 90 ուսանողներ (առկա ուսուցման համակարգի): Հարցման արդյունքների հաշվառման և ամփոփման համար բաժնի մասնագետների կողմից ստեղծվել է տեղեկատվական համապատասխան համակարգ՝ բազա: Արդյունքներն ամփոփվել են ուսանողների և դասախոսների գնահատականների հիման վրա՝ առանձին փաթեթով, որոնց մեջ ներառված են նաև նախորդ հարցման արդյունքների հետ համեմատական տվյալներ:

Ներկայացնենք հարցման արդյունքներն ըստ առանձին հարցերի:

Հետաքրքիր էր իմանալ, թե երբ են <u>գնահատման չափանիշները</u> ներկայացվում ուսանողներին, ուսանողների և դասախոսների կարծիքը գնահատման չափանիշների, ուսանողների առաջարկով դրանց փոփոխության, դասախոսների կողմից դրանց պահպանման վերաբերյալ:

<u>Գնահատման չափանիշների</u> վերաբերյալ հարցմանը մասնակցած դասախոսների 35.6+28.9=**93.6%**-ը, իսկ ուսանողների 45.2+48.4=**64,5%**-ը նշում է, որ դասընթացի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները ուսանողներին ներկայացվում է կամ կիսամյակի սկզբում, կամ կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ.

Թիվ	Ե՞րբ են ներկայացվում կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները /2015թ./	Ուսանողներ	Դասախոսներ
1	չեն նշել	13,3%	
2	կիսամյակի սկզբում	35,6%	45,2%
3	ընթացիկ քննությունից կամ ստուգումից առաջ	6,7%	
4	եզրափակիչ քննությունից առաջ	2,2%	
5	յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ	12,2%	3,2%
6	կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ	28,9%	48,4%
7	չեն ներկայացրել ընդհանրապես	1,1%	3,2%

Ուսանողների առաջարկով գնահատման չափանիշներում փոփոխություններ կատարելու, չափանիշները պահպանելու վերաբերյալ հարցման արդյունքներն ունեն հետևյալ ամփոփ տեսքը.



2015թ.-ի հարցման արդյունքներն ամփոփվել են, կատարվել է նրանց համեմատական վերլուծություն նախորդ հարցման արդյունքների հետ և ներկայացվել են բոլոր ֆակուլտետների դեկանատներ, տեղադրվել են մասնաճյուղի կայքում:

Հարցմանը մասնակցած ուսանողների 90%-ը և դասախոսների 77.4%-ը գտնում է, որ գնահատման համակարգում մասնակցությունների միավորի ներառումը նպաստում է դասաժամին ուսանողի ներգրավվածության բարձրացմանը, նշենք սակայն, որ այս ցուցանիշը դասախոսների համար նվազել է (նախորդում՝ 80.4%), ինչը վկայում է, որ դասախոսներն այնքան էլ բավարարված չեն այդ միավորի ներառմամբ, թեպետ ուսանողներն, ընդհակառակն, ուրախ են դրա համար (նախորդում՝ 81.3%): Այսինքն այս առումով մտորելու, և միգուցե նոր առաջարկներ կատարելու խնդիր կա:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնաճյուղում ուսանողների **կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերը**՝ միջանկյալ բանավոր, գրավոր, թեստային քննություններ և ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ հիմնականում բացահայտում և զարգացնում են ուսանողների գիտելիքները /դասախոսական հարցման միջին գնահատականը՝ 4.22, ուսանողական՝ 4.3/, և քիչ են նպաստում ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը /միջին գնահատականն ըստ դասախոսների չի գերազանցում 4-ին/: Հմտություններն ու կարողությունները գնահատելու համար դասախոսների կողմից /ըստ դասընթացի փաթեթում պլանավորած մոտեցումների/ կիրառվում են որոշակի մեթոդներ, սակայն դրանք ամբողջությամբ չեն կարողանում արտացոլել ուսանողների բոլոր ձեռքբերումները, թեպետ ուսանողները գտնում են, որ իրենց հմուտությունների և կարողությունների գնահատման տեսանկյունից վերջին տարիներին առաջընթաց կա /միջին գնահատականն ըստ ուսանողների գերազանցում է 4-ին, սակայն չի գերազանցում 4.6-ը/:



Ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերի ու նրանց արդյունավետության վերաբերյալ գնահատականները գոհացուցիչ չեն դասախոսական հարցման արդյունքներով (>51.6% և <77.4%), թեպետ լավ ընդունելի են ուսանողների կողմից (>67.8% և <85.6%): Այդ արդյունքներն ամփոփ ներկայացնում է հետևյալ դիագրամը՝



որը վկայում է, որ գնահատման գործող բազմագործոն համակարգն այնուամենայնիվ, ըստ դասախոսների, բացահայտում է ուսանողների տեսական գիտելիքները, բայց չի նպաստում գործնական հմտությունների և կարողությունների բացահայտմանը: Ըստ դասախոսների, 2013թ-ի արդյունքների համեմատ (միջ. միավորը=3.46) 2015թ-ի արդյունքներով (միջ.միավորը=3.82) մասնաճյուղում գործող բազմագործոն համակարգն արդեն ավելի է նպաստում բանավոր խոսքի զարգացմանը, ինչը չի կարելի ասել գրավոր խոսքի զարգացման մասին (համապատասխանաբար՝ 3.5, 3.57), իսկ հաշվեկշռային առումով՝ ընդհակառակը մասնակիցների ավելի քիչ մասն է համամիտ այն փաստի հետ, որ գնահատման համակարգը նպաստում է գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը.



Հակասական են կարծիքները <u>եզրափակիչ բանավոր քննությանը</u> հատկացված 10 միավորի արդարացված լինելու կապակցությամբ: Հարցմանը մասնակցած դասախոսների 61.3%-ը և ուսանողների 78.9%-ը հարցի համար տվել է 5 և 4 գնահատական, իսկ միջին գնահատականը, համապատասխանաբար, կազմել է 4.2 և 4.7 միավոր: Թե որքանով է արդարացված եզրափակիչ բանավոր քննությանը հատկացված 10 միավորը հարցման արդյունքները հետևյալն են,









և վկայում են որ և դասախոսները և ուսանողներն այնքնան էլ համամիտ չեն նրա հետ, հետևաբար պետք է անմիջական հանդիպումների միջոցով նրանցից ակնկալել նոր առաջարկներ և մոտեցումներ:

2015թ.-ի հարցմանը մասնակցած դասախոսների 48.4%-ը և ուսանողների 62.2%-ը գտնում է (միայն 5 միավոր), որ <u>**եզրափակիչ բանավոր քննության**</u> համար հատկացված 10-ը միավորն օգնում է դասախոսին լիարժեք կողմնորոշվել ուսանողի ցուցաբերած գիտելիքների գնահատման ժամանակ, իսկ ուսանողին՝ վաստակել իր ցուցաբերած գիտելիքներին համապատասխան միավոր: Սակայն նրանք գտնում են, որ եզրափակիչ բանավոր քննության ժամանակ նույնպես ըստ արժանվույն չեն բացահայտվում և գնահատվում ուսանողների հմտություններն ու առավել ևս կարողությունները.



Համեմատելով ուսանողների գնահատման վերաբերյալ երկու ուստարիների հարցումների արդյունքները հարցմանը մասնակցած ուսանողների 85%-ից ավելին գտնում է, որ եզրափակիչ բանավոր քննությունների ժամանակ իրենց ձեռքբերումների գնահատման ասպարեզում առաջընթաց կա, իսկ դասախոսների 64.5%-ը, որոնք գտնում են, որ եզրափակիչ քննությունը բացահայտում է ուսանողի հմտություններն ու կարողությունները՝ նվազել է /սա հավանաբար պայմանավորված է կոմպետենցիաների և նրանց գնահատման վերաբերյալ դասախոսների իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ, համապատասխան վերապատրաստման դասընթացներից ձեռք բերած գիտելիքներով/.





Հարցման խնդիրներից մեկն է բացահայտել **<u>թեստային քննությունների արդյունավետությունը</u>** և պարզել, թե որքանով են թեստերը բացահայտում ուսանողների ձեռքբերումները, ակնհայտ է վերևում նշված նկատառմանը համաձայն այստեղ նույնպես դասախոսները պետք է ցածր գնահատեին և նկատվեր նախորդ ուստարվա արդյունքների նկատմամբ նվազում.



Նշենք, որ ամբիոններում քննարկումների և դասախոսների փաստարկների ու հիմնավորումների արդյունքում 2014-15 ուստարվանից թեստերը կիրառվում են յուրաքանչյուր դասախոսի նախաձիրությամբ:

Ուսանողների գնահատման **<u>օբյեկտիվության և թափանցիկության վերաբերյալ</u>** երկրորդ հարցման արդյունքները բավականին հուսադրող են, և հարցմանը մասնակցած դասախոսների ավելի քան 80%-ը, իսկ ուսանողների ավելի քան 73%-ը գտնում է, որ գործող համակարգը հնարավորություն է տալիս դասախոսին լինել օբյեկտիվ և ուսանողները գնահատվում են թափանցիկ, թեպետ գտնում են, որ այն թույլ չի տալիս բացառել գրագողությունը, մասնավորապես թեստերը մեծացնում են արտագրելու հնարավորությունները, որի արդյունքում հնարավոր չի լինում խուսափել գրագողությունից /գրագողությունից կարելի է խուսափել ուսանողների քանակին հավասար իրարից տարբեր թեստեր կազմելով, տնային անհատական առաջադրանքներ հանձնարարելով, տարբեր տարբերակներով ստուգողական աշխատանքներ անցկացնելով, և իհարկե գնահատումների ժամանակ վերահսկումը լսարանում պահպանելով /.



Նախորդ հացման արդյունքների հետ համեմատած և դասախոսները, և ուսանողները գտնում են, որ գնահատման կիրառվող մեթոդները դարձել են ավելի արդյունավետ և բարձրացրել են գնահատման օբյեկտիվությունը, ինչը ամբիոններում իրականացվող բազմաբնույթ քննարկումների, փորձի փոխանակման և ձևավորված ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման և մոտեցումների արդյունք է.



Ըստ կրթական վերջնարդյունքների ուսանողների գնահատման և ուսանողին միտված քննական գործընթացների ճիշտ կազմակերպման արդյունքում բարձրացել է ուսանողների վստահությունն իրենց ստացած գնահատականի նկատմամբ: Ուսանողերի գրեթե 97%-ը գտնում է, որ **իրեն հայտնի է իր գնահատականի ձևավորման ողջ պատմությունը**, ինչի հետ համամիտ են դասախոսների գրեթե 95%-ը, ինչը ասում է գնահատման ակադեմիական ազնվության ապահովման մասին.





և բոլոր դասախոսները պնդում են, որ իրենք ուսանողին նաև հիմնավորում են նրա ձեռք բերած միավորը, ինչի հետ համամիտ են ուսանողների 85,6%-ը:

Բացի դրանից հարցմանը մասնակցած բոլոր դասախոսները պնդում են, որ իրենք **արձագանքում են ուսանողների բոլոր բողոքարկումներին**, իսկ նրանցից 45%-ը կատարել է ուսանողի միավորի փոփոխություն.



Հարցաթերթն իր մեջ պարունակել է նաև առաջարկությունների բաժին, ըստ որի եթե հարցման մասնակիցները գտնում են, որ գնահատման գործող բազմագործոն համակարգը պետք է փոխարինել այլ համակարգով, ապա առաջարկվող տարբերակներից որը կնախընտրեին: Համաձայն մշակված արդյունքների հարցմանը մասնակցած դասախոսների 39%-ը, իսկ ուսանողների 31%-ը, ինչպես և նախորդ հարցման ժամանակ, կողմնակից է միջանկյալ գրավոր քննությունների և եզրափակիչ բանավոր քննության տարբերակին:

Գործող համակարգն ակնհայտ է ունի առավելություններ, սակայն հաշվի առնելով կատարված առաջարկությունները հարկ է նշել, որ դրանք նպատակ ունեն հասնել գնահատման ավելի օբյեկտիվ և արդյունավետ համակարգի: Մասնավորապես, գնահատման նման համակարգը սահմանափակ է, հնարավորություն քիչ է տալիս ունենալ կրթական վերջնարդյունքներին համապատասխան գնահատման մեթոդներ և ձևաչափեր, չնայած դրա լուծման մի մեխանիզմ է պորտֆոլիոն:

Ելնելով ուսանողների և դասախոսների հարցման արդյունքներից ՄԿՈԱ բաժինն ուսումնասիրել է այլ **<u>առաջատար բուհերի գնահատման համակարգերը:</u>** Նոր կրթական չափորոշիչներին համապատասխան ուսանողի մոտ պետք է ձևավորվեն որոշակի գիտելիքներ, ձեռք բերվեն գիտելիքների կիրառման որոշակի հմտություններ և իրեն դրսևորելու կարողություններ, հետևաբար գնահատման համակարգը պետք է բացահայտի ուսանողի վերջնարդյունքներն ըստ նշված 3 բաղադրամասերի: Մշակվել և 2014թ. մայիսից դասախոսների և ուսանողների քննարկմանն են ներկայացվել գործող գնահատման համակարգում ըստ ուսումնառության արդյունքների ուսանողի արդյունարար գնահատականի բաղադրամասերի հատուկ ձևավորմամբ համակարգերի նախագծեր: Դրանք ներառում են նաև գործնական, լաբորատոր, սեմինար դասընթացներից և ինքնուրույն աշխատանքներից ուսանողի ձեռքբերումների գնահատման տարրեր: Նախապես ընտրված փորձառու դասախոսներն այդ նախագծերը 2014-15 ուստարում փորձարկել են գնահատման տարբեր ձևեր ունեցող (եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման և ստուգարքով ավարտվող) դասընթացների համար: Այդ արդյունքները կվերլուծվեն, և դասախոսները հանդես կգան առաջարկներով:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին